

Աուդիտորական եզրակացություն .....	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն .....	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն .....	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն .....	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	8
Ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություններ .....	9

18.06.2013թ

## Աուդիտորական եզրակացություն

«ՇԵՆ ՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի մասնակիցներին

Մենք հրավիրվել էինք իրականացնելու ենք «Շեն Տանիք» ՍՊԸ-ի -ի (այսուհետ «Շեն Տանիք») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ ծանոթագրություններ:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է սույն հաշվետվությունների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման համար: Այդ պատասխանատվությունը ներառում է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Սակայն, կարծիքից հրաժարման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցերի պատճառով մենք չենք կարողացել ձեռք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար հիմք կհանդիսանային աուդիտորական կարծիքի համար:

### *Կարծիքից հրաժարման հիմքեր*

Մենք նշանակվել էինք ընկերության աուդիտոր 2012թ-ի դեկտեմբերի 31-ից հետո, ուստի չենք հետևել պաշարների և հիմնական միջոցների գույքագրման գործընթացին տարվա սկզբում և վերջում: Մենք անկարող էինք իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր, որպեսզի մենք ինքներս համոզվեինք պաշարների և հիմնական միջոցների քանակության վերաբերյալ 2011թ-ի դեկտեմբերի 31-ի և 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են համապատասխանաբար պաշարներ 869 144 հազ. դրամ և 970 483 հազ. դրամ, հիմնական միջոցներ 21 958 հազ. դրամ և 62 924 հազ. դրամ գումարներով: Ի լրումն, 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված կրեդիտորական պարտքերի 97%-ը կազմակերպության արտասահմանյան գործընկերներին առկա պարտավորություններն են: Մեզ հասանելի չէին նշված ընկերությունների ղեկավարությունը և աուդիտորը, ներառյալ նշված ընկերությունների աուդիտորի աուդիտորական փաստաթղթերը: Արդյունքում, մենք անկարող էինք իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր, որպեսզի մենք ինքներս համոզվեինք 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված 861 127 հազ. դրամ կրեդիտորական պարտքերի վերաբերյալ: Նշված հարցերի արդյունքում, մենք անկարող էինք որոշել, արդյո՞ք որևէ ճշգրտում անհրաժեշտ էր հաշվառված կամ չհաշվառված պաշարների, հիմնական միջոցների և կրեդիտորական պարտքերի, ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալի և դրամական հաշվետվություններում ներառված տարրերի վերաբերյալ:



### *Կարծիքից հրաժարում*

Կարծիքից հրաժարման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցերի նշանակալիության պատճառով մենք չենք կարողացել ձեռք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար հիմք կհանդիսանային աուդիտորական կարծիքի համար: Հետևաբար, մենք չենք արտահայտում կարծիք կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Նաիրի Սարգսյան  
Տնօրեն  
Աուդիտոր

«ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ  
ք. Երևան, Գ. Նժդեհի 48/2

Միհրան Թովմասյան  
Առաջադրանքի Ղեկավար  
Աուդիտոր




# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	2012 ԾճՁԳԻ. Դ 000	2011 Դ 000
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>		
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>		
Հիմնական միջոցներ	62 924	21 958
Ներդրումային գույք		
Ոչ նյութական ակտիվներ		80
Նրդրումներ հաշվ. բաժնեմաս. մերդրվ		
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ		
Հետաձգված հարկային ակտիվներ		
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		
	<b>62 924</b>	<b>22 038</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>		
Պաշարներ	970 483	869 144
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	23 957	8 777
Տրված կանխավճարներ	354 451	289 170
Ընթացիկ հարկերի գծով գերավճարներ	29 083	10 881
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և համարժեքներ	10 989	44 513
Ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով	3 231	2 680
	<b>1 392 194</b>	<b>1 225 165</b>
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ	-	-
	<b>1 392 194</b>	<b>1 225 165</b>
<b>ԸՆԹՐԱԳՈՒՄՆԵՐ ԱԿՏԻՎՆԵՐ</b>	<b>1 455 018</b>	<b>1 247 203</b>
<b>ՊԱՍԻՎՆԵՐ</b>		
<b>Սեփական կապիտալ</b>		
Համալրված կապիտալ	17	17
Էմիսիոն էկամուտ		
Հետգնված կապիտալ		
Այլ պահուստային կապիտալ		
Չբաշխված շահույթ	(70 375)	(24 520)
Սեփական կապիտալի այլ տարրեր	6 821	6 821
Վաճառքի համար պահվող պարտավորու. պահուստ		
	<b>(63 537)</b>	<b>(17 682)</b>
Չվերահսկվող մասնակցություններ	-	-
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>	<b>(63 537)</b>	<b>(17 682)</b>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		
Վարկեր և փոխառություններ	572 816	553 719
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	-	-
Պահուստներ	-	-
Պետական շնորհներ	-	-
Աշխատակիցներից հատուցումներ	-	-
Այլ պարտավորություններ	-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ		
	<b>572 816</b>	<b>553 719</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	861 127	662 818
Ստացված կանխավճարներ	73 687	48 348
Վարկեր և փոխառություններ	11 025	-
Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ		
Ընթացիկ հարկերի գծով պարտավորություններ		
Պահուստներ	-	-
	<b>945 839</b>	<b>711 166</b>
Վաճառքի համար պահվող պարտավորություններ	-	-
	<b>945 839</b>	<b>711 166</b>
<b>ԸՆԴՊԱՄԵՆՆԵՐ ԱՊԱՍԻՎՆԵՐ</b>	<b>1 518 655</b>	<b>1 264 885</b>

**ԸՆԹՐԱԳՈՒՄՆԵՐ ԱՊԱՍԻՎՆԵՐ** 1 455 018 1 247 203

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ընկերության տնօրինության կողմից 2013թ. փետրվարի 2-ին:

Մնացական Սարգսյան  
Տնօրեն



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Հաճապարտիակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

	2012	2011
	ֆ. 000	ֆ. 000
<b>Արդյունքների գործունեություն</b>		
Ապրանքների և արտադրանքի վաճառք	652 657	498 567
Ծառայությունների մատուցում	12 963	-
<b>Հասույթ</b>	<b>665 620</b>	<b>498 567</b>
Վաճառքի ինքնարժեք	(600 153)	(480 696)
<b>Համախառն շահույթ (վնաս)</b>	<b>65 467</b>	<b>17 871</b>
Այլ եկամուտներ	345	99
Բաշխման ծախսեր	(9 214)	(5 948)
Վարչական ծախսեր	(31 035)	(20 128)
Այլ ծախսեր	(4 766)	(1 302)
<b>Գործառնական շահույթ (վնաս)</b>	<b>20 797</b>	<b>(9 408)</b>
Ֆինանսական ծախսեր		
Ֆինանսական եկամուտներ		
Ասոցիացված կազմակերպությունների և համատեղ գործունեության շահույթ (վնաս)՝ հաշվառված բաժնեմասնակցության մեթոդով	-	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	(59 961)	(52 272)
<b>Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) մինչև հարկումը</b>	<b>(39 164)</b>	<b>(61 680)</b>
Շահութահարկի զծով ծախս	(6 691)	(6 571)
<b>Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)</b>	<b>(45 855)</b>	<b>(68 251)</b>
<b>Արդյունքների գործունեություն</b>		
Ընդհատվող գերծունեությունից շահույթ (վնաս)		
հարկերը հանելուց հետո	-	-
<b>Շահույթ (վնաս)</b>	<b>(45 855)</b>	<b>(68 251)</b>

Հաճապարտիակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

	Համարված կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Հետգնված կապիտալ	Այլ պահուստային կապիտալ	Զբաղված շահույթ	Ակտիվների վերագնահատման արհուստ	Ընդհատվող գործունեություն	Ընդամենը	Զվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
	Դր 000	Դր 00	Դր 000	Դր 000	Դր 000	Դր 000	Դր 000	Դր 000	Դր 000	Դր 000
<b>Արհ. 01.01.2011թ.</b>	-	-	-	-	1 476	-	-	1 476	-	1 476
Հաշվապահական հաշվառման բաղաբնականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	1 476	-	-	1 476	-	1 476
առ 01.01.2011թ. (վերահաշվարկված)	17	-	-	-	43 731	6 821	-	50 569	-	50 569
Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	-	-	-	-	(68 251)	-	-	(68 251)	-	(68 251)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	(68 251)	-	-	(68 251)	-	(68 251)
Ակտիվների վերագնահատումից փոփոխություններ	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդհատված գործունեություն	-	-	-	-	-	-	-	-	-	-
Թողարկված բաժնեմասեր	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բաշխումներ սեփականատերերին	-	-	-	-	-	-	-	-	-	-
Շահարաժիճներ	-	-	-	-	-	-	-	-	-	-
Դուստր կազմ. սեփականության բաժնեմասի փոփոխություն	-	-	-	-	-	-	-	-	-	-
Զվերահսկվող բաժնեմասի փոփոխություն	-	-	-	-	-	-	-	-	-	-
<b>Արհ. 31.12.2011թ.</b>	-	-	-	-	(24 520)	6 821	-	(17 682)	-	(17 682)
Հաշվապահական հաշվառման բաղաբնականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-	-	-	-	-	-
առ 01.01.2012թ. (վերահաշվարկված)	17	-	-	-	(24 520)	6 821	-	(17 682)	-	(17 682)
Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	-	-	-	-	(45 855)	-	-	(45 855)	-	(45 855)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	(45 855)	-	-	(45 855)	-	(45 855)
Ակտիվների վերագնահատումից փոփոխություններ	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդհատված գործունեություն	-	-	-	-	-	-	-	-	-	-
Թողարկված բաժնեմասեր	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բաշխումներ սեփականատերերին	-	-	-	-	-	-	-	-	-	-
Շահարաժիճներ	-	-	-	-	-	-	-	-	-	-
Դուստր կազմ. սեփականության բաժնեմասի փոփոխություն	-	-	-	-	-	-	-	-	-	-
Զվերահսկվող բաժնեմասի փոփոխություն	-	-	-	-	-	-	-	-	-	-
<b>Արհ. 01.12.2012թ.</b>	-	-	-	-	(70 375)	6 821	-	(63 537)	-	(63 537)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից 23-րդ էջերում ներկայացված կից նախորդ տարիների հետ մեկտեղ:

## Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Ծնագր.	2012		2011	
	Գ	000	Վերահաշվ.	
	Գ	000	Գ	000
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>				
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	809 299		658 377	
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(13 646)		(10 190)	
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(655 344)		(767 115)	
Այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(4 196)		(16 931)	
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	(154 627)		(86 657)	
Այլ վճարումներ	(2 598)		(3 403)	
Այլ մուտքեր	12 077		183	
Շահութահարկ	(9 004)		(8 343)	
<b>Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր</b>	<b>(18 039)</b>		<b>(234 079)</b>	
<b>Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</b>				
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից				
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	(3 725)		(80)	
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից մուտքեր				
Ֆինանսական ակտիվների ձեռք բերում	-		-	
Ստացված տոկոսներ	69			
Վճարված տոկոսներ				
Այլ վճարումներ				
<b>Ներդրումային գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր</b>	<b>(3 656)</b>		<b>(80)</b>	
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>				
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից մուտքեր				
Ստացված վարկերից և փոխառություններից	442 314		492 214	
Ստացված վարկերի և փոխառությունների մարումներ	(454 156)		(282 110)	
Վճարված շահաբաժիններ				
Ստացված տոկոսներ				
Վճարված տոկոսներ				
Այլ վճարումներ				
<b>Ֆինանսական գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր</b>	<b>(11 842)</b>		<b>210 104</b>	
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ</b>	<b>(33 537)</b>		<b>(24 055)</b>	
Դրամական միջոցների այլ ելքեր				
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	12		(2 927)	
<b>Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը</b>	<b>44 431</b>		<b>71 413</b>	
<b>Դրամական միջոցների հավանական մնացորդը</b>				
	<b>10 506</b>		<b>10 506</b>	

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություններ

1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ  
«Շեն Տանիք» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») ստեղծվել և գրանցվել է ՀՀ Պետական ռեգիստրում 1998թ. դեկտեմբերի 29-ին: Ընկերության հիմնադիրն է ՀՀ քաղաքացի

Լիանուշ Ավետիքյան - 100%

Ընկերության գործունեության հիմնական տեսակն է.

- շինանյութերի մանրամեծածախ առևտուր
- մետաղապլաստե դռների և պատուհանների արտադրություն

Ընկերությունը գրանցված է Հայաստանի Հանրապետություն (այսուհետ՝ ՀՀ), Երևան, Գ. Նժդեհի 28 հասցեում:

Ընկերության աշխատակիցների տարեկան միջին ցուցակային թվաքանակը 2012թ. կազմել է 27 անձ (2011թ.՝ 39 անձ):

### 2. Պատրաստման հիմքեր

#### ա. Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն վարվող հաշիվների հիման վրա և ներկայացված են Ֆինանսական Հաշվետվությունների Ներկայացման Միջազգային Ստանդարտների (ՖՀՆՄՍ) համաձայն:

#### բ. Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

#### գ. Ֆունկցիոնալ արժույթ

Հայաստանի ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը, եթե այլ բան նշված չէ:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են դրամով, քանի որ տնօրինության համոզմամբ այս արժույթը առավել օգտակար է ֆինանսական հաշվետվությունները օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը (եթե այլ բան նշված չէ):



դ. Գնահատումների և դատողությունների կիրառում  
Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ՖՀՆՄՍ-ի համաձայն պահանջում է, որպեսզի Ընկերության տնօրինությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների վրա, ինչպես նաև հաշվետու ժամանաշրջանում եկամուտների և ծախսերի հաշվառված գումարների վրա: Գնահատումների կատարում պահանջող կարևորագույն ոլորտները ներառում են նյութական և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները, հետաձգված հարկային ակտիվների գնահատումը և կասկածելի դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստը: Չնայած այն բանին, որ դատողությունների հիմքում ընկած են ընթացիկ իրադարձությունների և գործողությունների վերաբերյալ ղեկավարության լավագույն պատկերացումները, փաստացի արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից:

### 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

ա. Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընթացիկ տարում Ընկերությունը կիրառել է բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, հրապարակված Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների հորիզոնի կողմից («ՀՀՄՍԽ») և «ՀՀՄՍԽ»-ի Միջազգային Հաշվապահական Հաշվառման Մեկնաբանությունների Կոմիտեի («ՄՀՀՄԿ») կողմից, որոնք կարևոր են նրա գործառնությունների համար և կիրառվում են 2011թ-ի հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար: Այս նոր և վերանայված ստանդարտների և մեկնաբանությունների ներդրումը չի հանգեցնում Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների:

Տնօրինությունը կանխատեսում է, որ այս ստանդարտների և մեկնաբանությունների կիրառումը հետագա ժամանակաշրջաններում չի ունենա ոչ մի էական ֆինանսական ազդեցություն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ. Արտարժույթ

#### *Արտարժույթային գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ կազմելիս Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով կատարված գործարքները հաշվառվում են գործարքի օրվա՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը՝ 2012թ. համար 1 ԱՄՆ դոլարը կազմում է 403.58 ՀՀ դրամ, 1 եվրոն կազմում է 532.24 ՀՀ դրամ (2011թ. համար 1 ԱՄՆ դոլարը կազմում է 385.77 ՀՀ դրամ, 1 եվրոն կազմում է 498.72 ՀՀ դրամ): Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով ներկայացվող ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտաթուփային գործարքներից, ինչպես նաև արտաթուփով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը և վնասը ճանաչվել է շահույթում կամ վնասում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի և վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն շահույթում կամ վնասում:

գ. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Այն դեպքում, երբ որևէ հիմնական միջոց կազմված է տարբեր օգտակար ծառայության ժամկետներ ունեցող մի շարք խոշոր բաղադրիչներից, ապա դրանք հաշվառվում են որպես առանձին հիմնական միջոցներ:

Հիմնական միջոցի՝ առանձին հաշվառվող բաղադրիչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրվող բաղադրիչի հաշվեկշռային արժեքին: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են, եթե ծախսումներից ակնկալվում է ապագա տնտեսական օգուտ: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ վերանորոգման և պահպանման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս՝ ըստ կատարման:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետների ընթացքում: Մաշվածությունը սկսում է հաշվարկվել այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- |  |         |
|--|---------|
| • Շենքեր, շինություններ և փոխանցող հարմարանքներ            | 20 տարի |
| • Մեքենաներ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ        | 5 տարի  |
| • Արտադրատնտեսական գույք, գործիքներ, այլ հիմնական միջոցներ | 5 տարի  |
| • Համակարգչային տեխնիկա                                    | 5 տարի  |

դ. Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ամորտ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվների համար ամորտիզացիա չի հաշվարկվում:

Ամորտիզացիան ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է գծային մեթոդով՝ ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

**ե. Պաշարներ**

Պաշարները ներկայացված՝ են ինքնարժեքի և իրացման զուտ արժեքի նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

Պաշարները հաշվառվում են առաջին մուտք առաջին ելք սկզբունքով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

**զ. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր**

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրենց իրական արժեքով: Եթե առկա են օբյեկտիվ ապացույցներ, որ տեղի է ունեցել դեբիտորական պարտքերի արժեզրկում, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է ուղղակիորեն կամ պահուստավորման միջոցով:

Պահուստը հաշվարկվում է դեբիտորական պարտքի ժամկետների, ինչպես նաև անցյալի միտումների և վիճակագրական տեղեկատվության հիման վրա: Ավելի քան 1 տարվա դեբիտորական պարտքերը պահուստավորվում են 100%-ով: Բոլոր մնացած պարտքերը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին գնահատվում են անցյալի միտումների և վիճակագրական տեղեկատվության հիման վրա:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ ծախսի կամ եկամտի գրանցմամբ: Հաճախորդների հաշիվների մնացորդներից դուրս գրվող որևէ գումար հանվում է կասկածելի պարտքերի առկա պահուստից: Բոլոր այն դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումն անհավանական է համարվում, դուրս են գրվում:

**է. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

**ը. Արժեզրկում**

Փոփոխտուցվող գումարը հաշվառվում է իրացման զուտ գնի և օգտագործման արժեքի առավելագույնով: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի վերականգնվող արժեքը գնահատվում է ավելի ցածր, քան նրա հաշվեկշռային արժեքը, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա վերականգնվող արժեքը: Արժեզրկումից կորուստները ամմիջապես ճանաչվում են որպես ծախս, իսկ այն դեպքում, երբ համապատասխան ակտիվը հաշվառված է վերագնահատված արժեքով, արժեզրկումից կորուստը համարվում է վերագնահատված արժեքի նվազեցում:

Երբ արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը բարձրացվում է մինչև վերականգնվող արժեքի վերանայված գումարը, սակայն այնպես, որ բարձրացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը գրանցված կլիներ, եթե նախորդ տարիներին ակտիվի կամ դրամաստեղծ միավորի համար արժեզրկում ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորուստի

հակադարձումը անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, իսկ այն դեպքում, երբ համապատասխան ակտիվը հաշվառված է վերագնահատված արժեքով, արժեզրկումից կորուստի հակադարձումը համարվում է վերագնահատված արժեքի ավելացում:

թ. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են, եթե միայն կա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կհամապատասխանի դրան կից պայմաններին, և շնորհը կստացվի:

Ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես հետաձգված եկամուտ և ճանաչվում են եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում՝ սխտեմատիկ և ռացիոնալ հիմունքով՝ ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

ժ. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ներկայացված են իրական արժեքով:

ժ(ա). Փոխհատուցումներ աշխատակիցներին

Ընկերությունն աշխատակիցների օգտին հատկացումներ է կատարում Հայաստանի Հանրապետության Սոցիալական Ապահովագրության Պետական Հիմնադրամին: Հատկացումները ճանաչվում են որպես ծախս՝ ըստ կատարման:

ժ(բ). Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրենց իրական արժեքով՝ հանած փոխառության տրամադրմանը վերաբերող ծախսերը: Նախնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները ներկայացվում են ամորտիզացված արժեքով, իսկ արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում փոխառության ժամկետի ընթացքում արդյունավետ տոկոսադրույքի սկզբունքով:

ժ(գ). Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ անցյալ իրադարձության հետևանքում Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն, և հավանական է, որ պարտավորության մարման համար անհրաժեշտ կլինի տնտեսական օգուտի արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ նախքան հարկումը այնպիսի տոկոսադրույքով, որն արտահայտում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանն առնչվող յուրահատուկ ռիսկերը:

ժ(դ). Կանոնադրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալ գործիքները ներկայացված են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

**ժ(ե). Շահութահարկ**

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվին գործող հարկային դրույքաչափերով, հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված շահութահարկը հաշվարկվում է Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում ֆինանսական հաշվետվությունների համար ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով կիրառվող գումարների տարբերությունները: Հետաձգված շահութահարկի հաշվարկված գումարը հիմնված է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների իրացման կամ մարման ենթադրվող տարբերակի վրա՝ կիրառելով Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող հարկային դրույքաչափերը:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են իրացվել չօգտագործված հարկային վնասները և փոխհատուցումները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այն չափով, որքանով այլևս հավանական չէ, որ դրան առնչվող հարկային օգուտները կիրացվեն:

**ժ(զ). Հասույթ**

Հասույթը ներառում է հաճախորդներին մատուցված ծառայությունների և վաճառված արտադրանքի, ապրանքների դիմաց ներկայացված հաշիվների գումարները, առանց ավելացված արժեքի հարկի: Ապրանքների և արտադրանքի իրացումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ գնորդին են փոխանցվում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերը և փոխհատուցումների զգալի մասը, և երբ հատուցման, համապատասխան ծախսերի և ապրանքների հնարավոր վերադարձի վերաբերյալ էական անորոշություններ չկան:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է ժամանակային համամասնության հիմունքով, հաշվի առնելով ակտիվի մայր գումարը և մինչև մարման ժամկետը գործող արդյունավետ տոկոսադրույքը, երբ ակնկալվում է, որ նման եկամուտը կվերագրվի Ընկերությանը:

**ժ(է). Կառուցման պայմանագրեր**

Երբ կառուցման պայմանագրի կատարման արդյունքները հնարավոր է արժանահավատորեն գնահատել, հասույթը և ծախսումները ճանաչվում են հաշվի առնելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ պայմանագրային աշխատանքների կատարման աստիճանը, որը չափվում է պայմանագրային աշխատանքների կատարման ֆիզիկական համամասնությանը համապատասխան:

Երբ կառուցման պայմանագրի կատարման արդյունքները հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, պայմանագրի հասույթը ճանաչվում է պայմանագրի փաստացի ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն:

**Ժ(ը). Ֆինանսական ծախսեր**

Ֆինանսական ծախսերը ներառում են վարկի և փոխառությունների գծով տոկոսային ծախսերը: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերաբերող փոխառությունների ծախսերից, որոնք կապիտալացվում են՝ որպես այդ ակտիվի մի մաս:

**Ժ(թ). Գործառնական վարձակալություն**

Գործառնական վարձակալությունների գծով կատարված վճարումները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում:

**Հիմնական միջոցներ**

	Շենքեր և շինություն ներ	Մեքենաներ և սարքավորո ւմներ	Տրանսպոր տային միջոցներ	Արտադրա կան գույք, տնտ. գույք, գործիքնե ր	Գողամասեր
	Դր. 000	Դր. 000	Դր. 000	Դր. 000	Դր. 000
<b>ՄԱՍԻՆԻՍՏՐԱԿՆԵՐԻ ԻՆՖՐԱՏՐՈՒԿՏՐԱԿՆԵՐ</b>					
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.	1 916	42 638	11 116	472	10 897
Ավելացումներ					
Չեռնարկատիրական գործունեության միավորումների միջոցով ձեռքբերումներ					
Վերագնահատում					
Օտարումներ					
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	1 916	42 638	11 116	472	10 897
Ավելացումներ	16 000		35 351	805	
Չեռնարկատիրական գործունեության միավորումների միջոցով ձեռքբերումներ					
Վերագնահատում					
Օտարումներ					
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ.	17 916	42 638	46 467	1 277	10 897
<b>ՍՊՈՐՏԱԿԱՆ ԻՆՖՐԱՏՐՈՒԿՏՐԱԿՆԵՐ</b>					
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.	(214)	(33 355)	(5 932)	(181)	
Տարվա մաշվածություն	(96)	(3 043)	(2 166)	(94)	
Արժեզրկումից կորուստներ					
Վերագնահատում					
Օտարումներ					
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	(310)	(36 398)	(8 098)	(275)	-
Տարվա մաշվածություն	(762)	(2 739)	(7 525)	(164)	
Արժեզրկումից կորուստներ					
Վերագնահատում					
Օտարումներ					
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ.	(1 072)	(39 137)	(15 623)	(439)	-
<b>Հաշվեկշռային արժեք</b>					
Առ 31 դեկտեմբեր 2012թ.	16844	3501	30844	838	10897
Առ 31 դեկտեմբեր 2011թ.	1606	6240	3018	197	10897
Առ 1 հունվար 2011թ.	1702	9283	5184	291	10897

2012թ. դեկտեմբերի 31-ի և 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը վարկերի և փոխառությունների ապահովման դիմաց գրավադրված հիմնական միջոցներ չունի:

Մաշվածության ծախսի տեղաբաշխումը հետևյալն է.

	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարչական ծախսեր	(94)	(5986)
Բաշխման ծախսեր	(2262)	(1729)
Արտադրական ծախսումներ	(3043)	(3475)
	<b>(5399)</b>	<b>(11190)</b>

4. Հետաձգված շահութահարկի գծով ակտիվներ

Ընկերությունում հարկման ժամանակավոր տարբերություններ չեն առաջացել:

5. Շահութահարկի կանխավճար

2011թ. գործունեության արդյունքում Ընկերությունը ստացել է հարկվող շահույթ և հաշվարկել 6 571 հզր. դրամ շահութահարկ: Համաձայն ՀՀ հարկային օրենսդրության, Ընկերությունը 2011 և 2012թթ. ընթացքում կատարել է շահութահարկի կանխավճարներ նախորդ տարվա շահութահարկի 1/16 մասով: 2012թ. գործունեության արդյունքներով ընկերությունը հաշվարկել է ընդամենը 6 691 հզր. դրամ շահութահարկ, իսկ մնացած կանխավճարները, Ընկերության ղեկավարության կանխատեսումներով, կմարվեն ավելի քան մեկ տարվա ընթացքում:

6. Պաշարներ

<i>հազար դրամ</i>	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Նյութեր		
Ապրանքներ	869 144	970 483
Արտադրանք		
	<u>869 144</u>	<u>970 483</u>

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը վարկերի և փոխառությունների ապահովման դիմաց գրավադրված շրջանառու միջոցներ չունի: (2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը վարկերի և փոխառությունների ապահովման դիմաց գրավադրված շրջանառու միջոցներ նույնպես չունի):

Ընկերությունը պաշարները հաշվառում է ինքնարժեքով: Չնայած այն հանգամանքին, որ ընկերությունում առկա են մեկ և երկու տարի չվաճառված ապրանքներ, որոնց իրացման զուտ արժեքը կարող է ցածր լինել ինքնարժեքից:

7. Տրամադրված փոխառություններ

	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ կապակցված կողմերին		



2011թ-ի ընթացքում փոխառություններ չեն տրամադրվել:

**8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր**

	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	8 729	23 957
Դեբիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով	48	
Հաշվարկներ բյուջեի հետ	10 881	29 083
	<u>19 658</u>	<u>64 564</u>

Կազմակերպությունում 2012թ-ին կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստներ չեն ձևավորվել:

Ընկերության տնօրինության համոզմամբ Ընկերության դեբիտորական պարտքերը հավաքագրման ռիսկ չեն պարունակում:

**9. Տրված կանխավճարներ**

	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրված կանխավճարներ	289 170	354 451
	<u>289 170</u>	<u>354 451</u>

**10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	48419	1 012
Բանկային հաշիվներ	41664	9 894
Դրամական միջոցներ ճանապարհին	83	83
	<u>90 166</u>	<u>10 989</u>

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում և 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմակերպության հաշիվները կալանքի տակ չեն գտնվել: Արդշինհնվեստբանկ ՓԲԸ-ում գործող հաշվարկային հաշից 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 600 000 դրամ հանդիսանում է գրավի առարկա երաշխիքի տրամադրման համար:

**11. Կանոնադրական կապիտալ**

	Կանոնադրական կապիտալ 2011թ.	Կանոնադրական կապիտալ 2012թ.
Անվանական արժեք (հազ. դրամ)	17	17

**12. Վարկեր և փոխառություններ**

	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկից ստացված վարկ		
Փոխառություններ կապակցված կողմերից	553 719	583 841
Ներառյալ՝		
Երկարաժամկետ մաս	553 719	572 816
Կարճաժամկետ մաս		11 025

Փոխառությունները ստացվել են միայն կապակցված կողմերից, անտոկոս: Փոխառությունների ստացման պայմանագրերը կնքվում են հիմնականում տասը տարի ժամկետով, այդ ընթացքում չմարվելու դեպքում ժամկետները երկարացվում են:

**13. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր**

	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորներ	662 818	860 751
Սոցիալական ապահովագրության վճարներ		376
Ընթացիկ հարկերի գծով պարտավորություններ		
	662 818	861 127

**14. Ստացված կանխավճարներ**

	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստացված կանխավճարներ	48 348	73 687
	48 348	73 687

**15. Հասույթ**

	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտադրանքի վաճառքից	230312	242526
Ապրանքների վաճառքից	268255	410131
Ծառայությունների մատուցումից		12963
Այլ		
	<u>498 567</u>	<u>665620</u>

**16. Վաճառքի ինքնարժեք**

	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	(243 414)	(228 789)
Վաճառված ապրանքների ինքնարժեք	(237 282)	(371 364)
Մատուցված ծառայությունների ինքնարժեք		
	<u>(480 696)</u>	<u>(600 153)</u>

**17. Շահութահարկի գծով ծախս**

	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ շահութահարկի ծախս	(6 571)	(6 691)
Հետաձգված շահութարկի փոխհատուցում		
	<u>(6 571)</u>	<u>(6 691)</u>

**18. Ֆինանսական ռիսկերի կառավարում**

Վարկային, իրացվելիության և արժուքային ռիսկերի ազդեցությունը առաջանում է ԸՆԿերության բնականոն գործունեության ընթացքում:

**ա. Վարկային ռիսկ**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի - դրությամբ կազմակերպությունը վարկեր չունի: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԸՆԿերությունը կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ չունի:

**բ. Իրացվելիության ռիսկ**

ԸՆԿերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն, այն է, պահել բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ անհրաժեշտության դեպքում բոլոր գործառնական և պարտավորությունների հետ կապված վճարումներ

կատարելու համար: Կազմակերպության հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը ցույց է տալիս, որ ընկերությունն չունի բավականաչափ արագ իրացվելի ակտիվներ և դրամական միջոցներ՝ պարտավորությունները մարելու համար:

**գ. Արտարժույթային ռիսկ**

Ընկերությունը ենթակա է արտարժույթային ռիսկի երբ իրացումները, ձեռքբերումները կատարվում են և փոխառությունները ստացվում և տրվում են ոչ ընկերության ֆունկցիոնալ արժույթով: Ընկերության համար ռիսկային հիմնական արժույթ է հանդիսանում ԱՄՆ դոլարը, լինում են նաև գործարքներ EUR, RUR արտարժույթներով: Ընկերության քաղաքականությունը չի նախատեսում արտարժույթային ռիսկի հեջավորում:

**դ. Իրական արժեք**

Տնօրինության համոզմամբ, Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

**19. Պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ**

**ա. Իրավական պարտավորություններ**

2011թ. դեկտեմբերի 31-ի և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության դեմ հարուցված հայցեր չկան:

**բ. Պարտավորություններ կապիտալ ներդրումների գծով**

2011թ. դեկտեմբերի 31-ի և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի էական պարտավորություններ կապիտալ ներդրումների գծով:

**գ. Հարկային պարտավորություններ**

ՀՀ-ում հարկային համակարգը համեմատաբար բարդ է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ: Վերջինս հաճախ անորոշ է, հակասական և պահանջում է մեկնաբանություններ: Շատ դեպքերում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկային ոլորտը ենթակա է վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել խիստ տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները կարող են ՀՀ-ում առաջացնել հարկային ռիսկեր, որոնք շատ ավելի զգալի են, քան այլ զարգացած երկրներում: Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա, և հարկային ռիսկերի որևէ զնահատում չունի ու համապատասխան պահուստ չի նախատեսել: Այնուամենայնիվ, հնարավոր է որ, համապատասխան իրավասու մարմինները ունենան տարբեր մեկնաբանություններ, որոնց ազդեցությունը կարող է էական լինել:

2012 թ-ի սեպտեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 15-ը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից անցկացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ

օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում կազմակերպությանն առաջադրվել է լրացուցիչ հարկեր և տուգանքներ 3 801.6 հազ. դրամի չափով, որից 1 524 հազ. դրամ շահութահարկի գծով, 502.4 հազ. դրամ ԱԱՀ-ի գծով և 1 775.2 հազ. դրամ տուգանքների գծով:

**դ. Ապահովագրություն**

Ընկերության շահագործվող հիմնական միջոցներից ապահովագրված են միայն տրանսպորտային միջոցները: Ընկերության պաշարները ապահովագրված չեն, ինչը կարող է բերել հետագա էական կորուստների:

**ե. Շրջակա միջավայրի պահպանություն**

Ընկերության ղեկավարության կարծիքով, Ընկերությունը հետևում է շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ կառավարական բոլոր պահանջներին, այդ իսկ պատճառով վստահ է, որ Ընկերությունը չունի ոչ մի ընթացիկ, նյութական պարտավորություններ շրջակա միջավայրի պահպանության հետ կապված:

**զ. Պայմանական ակտիվներ և պարտավորություններ**

2011թ. դեկտեմբերի 31-ի և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պայմանական ակտիվներ և պարտավորություններ չունի:

**20. Գործարքներ կապակցված կողմերի հետ**

Ընկերության կապակցված կողմերն են.

- Լիանուշ Ավետիքյան՝ հիմնադիր, գործադիր տնօրեն
- Շեն Տանիք Պյուս ՍՊԸ՝ որի հիմնադիրն է ընկերության հիմնադիրը
- Մնացական Սարգսյան՝ հիմնադիրի ընտանիքի մտերիմ անդամ, ընկերության տնօրեն
- Մարինե Սարգսյան՝ հիմնադիրի ընտանիքի մտերիմ անդամ
- Մարինե Սարգսյան ՍՊԸ՝ հիմնադիրը և տնօրենը հանդիսանում են ընկերության հիմնադիրի ընտանիքի մտերիմ անդամ (Մարինե Սարգսյան, Անի Սարգսյան)
- Թերմոլենդ ՍՊԸ՝ հիմնադիրը հանդիսանում է ընկերության հիմնադիրի ընտանիքի մտերիմ անդամ (Մարինե Սարգսյան)
- Մերի Սարգսյան՝ մասնակից
- Անի Սարգսյան՝ հիմնադիրի ընտանիքի մտերիմ անդամ
- Գագիկ Ալիխանյան՝ մասնակից

**Գործարքներ կապակցված կողմերի հետ**

Ընկերության գործարքներն այլ կապակցված կողմերի հետ բացահայտված են ստորև՝

*Ստացված Փոխառություններ*

	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի տոկոսային ծախս.	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդը	2012թ. դեկտեմբե րի 31-ին ավարտվա ծ տարի տոկոսային ծախս.	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդը
Լիանուշ Ավետիսյան	-	(553 719)	-	(583 841)
		<b>(553 719)</b>		<b>(583 841)</b>

Ընկերության ղեկավար անձնակազմում ներառված են գործադիր տնօրենը, փոխտնօրենները և այլ բաժինների ղեկավարները: Տնօրինության փոխհատուցումը ներառում է աշխատավարձը: 2011թ. հաշվետու տարվա համար ղեկավար անձնակազմի ստացված աշխատավարձի և այլ փոխհատուցումների գումարը կազմել է 2 524 հազար դրամ, իսկ 2012 թ-ի համար՝ 3 206 հազ. դրամ:



---

**«ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ**  
**«GARANT AUDIT» LLC**

---

ք. Երևան, Գ. Նժդեհի 48/2  
հեռ. 060-50-27-27

**Աուդիտորական եզրակացություն**  
**և**  
**Ֆինանսական հաշվետվություններ**  
**31 դեկտեմբերի 2011 թ. դրությամբ**  
**«Շեն Տանիք»**  
**Սահմանափակ Պատասխանատվությամբ**  
**Ընկերություն**